

49
R. P. Kalm... (Austria)
Mechitaristengasse W. 4
Vienna
ԹԻԻ

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչխարիչի համար	
Տարեկան	10 ծր.
Վեցամսեայ	5 »
Բնասանմանի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Անկերիչի համար	
Տարեկան	2.50 ռըր.
Վեցամսեայ	1.25 »
ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԵԼԻ	

Իսկուցման տղր առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքին առաջին անգամներու համար 20 Օ10 զեղը կրղայ :

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՇՄԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹ ԶՈՐԵԸՉՔՁԵԻ ԵՒ ՇՄԱԹՆԻ ՈՐԵՐԸ

Редакция на вестникъ «Шаржумъ» Варна.

Redaction du journal «Charjourn» Varna (Bulgarie)

Դրոսթիւնիս էս յին տրուր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐՅՐՈՒԹԻՒՆ

Քաղաքիս Աղգ. երկսեռ վարժարաններու հրապարակային տարեկան հարցաքննութիւնները պիտի սկսին յառաջիկայ Յունիս 20ին, կիրակի օր, եկեղեցիի աւարտումէն յետոյ, ժամը տաս ու կեսին և պիտի վերջանան 12 օրուան մէջ :

Քննութեանց ժամերն են. Ամէն օր, առաւօտները ժամը 9 ու կէսէ—12, իսկ կէս օրէն յետոյ 2 ու կէսէ—5 :

Փափաքող ազգայինները կը հրաւիրուին ներկայ գտնուիլ :

Տնօրէն—գասատու Վ. Շահիրխան Վառնա, 14 Յունիս

ՅԱՅՏԱՐՅՐՈՒԹԻՒՆ

Հայկական կրթարանի տարեկան հրապարակային քննութիւնները պիտի սկսին վաղը, կիրակի, 20 Յունիս, և վերջանան յաջորդ կիրակի, 27 Յունիս :

Քննութիւնները կը կատարուին ամէն օր, առաւօտները ժամը 10—12, իսկ կէս օրէ վերջ 2—5 :

Ձեռագործները և զծագրութիւնները ի տես գրուած են :

Ամէն աղգային ազատ է ներկայ գտնուիլ քննութեանց :

Փափաքողներու կը շրջուին տպուած ժամանակացոյցեր :

Հիմնադիր—Տնօրէն Կոսն Միխայիլիան Վառնա, 19 Յունիս 1899

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Դարբիէլ Ս. Թօգաթլեան և աղգականք իրենց շնորհակալիքը կը յայտնեն այն ամէն բարեկամաց, որոնք ներկայ գտնուեցան Տիկին Երանիկ Ս. Թօգաթլեանի յուղարկաւորութեան և իրենց ցաւակցութիւնն արտայայտեցին :

Փ. Պօլիս, 12 Յունիս 1899

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԸ

Բ.

Հայրենիքի մէջ գործերը ծանր կերպարանք են ստանում : Այս ու այն անկիւններէց զէնքի շառաչւնը լսում է և արձագանգ տալիս Եւրոպական նոյն իսկ թրքասէր թերթերում :

Ի՞նչ է անում հայութիւնը օր աւուր աւելի սպառնական կերպարանք առնող հայրենիքի պահանջների դիմաց :

Պատրիարքն ու կրօնական ժողովը հլու ստրուկի նման շնական հնազանդութեան պարկը ուսերին՝ սողում են Սուլթանի արիւնտ գահի տակ : Քաղաքական ժողովը իր Արթին փաշա Տատեաններով ու Նուրեաններով շոյում են բռնակալի բոլոր կրքերն ու կամայականութիւնները : Նրանք բոլորը դառնում են փառաւոր ու հնազանդ գործիքներ փատիշահի հայակեր քաղաքական խարդաւանանքների համար :

Թողնենք գրանց. գրանք արդէն վաղուց շնջւած են հայութեան ցուցակից :

Ի՞նչ է անում արտասահմանը : Արտասահմանի հայութեան «մտաւոր առաջնորդ» կոչւած Խիկար իմաստունները խոհեմութիւն, զգուշութիւն, քաղաքագիտութիւն են քարոզում :

Տառապող տաճկահայ՝ եղբայր, երբ քու տունդ ու տեղդ կողսպատեն, ունեցած-չունեցածդ կըրակի բաժին անեն՝ դու սառնաորտութեամբ դիտիր քո «լաճերուդ» սովամահ մնալը, նրանց ու քու անօթի ստատկումը պէտք է խոհեմութիւն :

Տառապող եղբայր, երբ կրնդ ու աղջիկդ, քոյրդ ու նշանածդ բռնաբարեն քո աչքիդ առաջ՝ դու լուր, զէնքի մի գիմիր զգոյշ պէտք է լինիլ :

Դո՛ւ, հայ կարիճ՝ որ բռնակալի ճնշումների շնորհով ազատութեան սգին ծնեցիր քո սըր-

տում. դո՛ւ, որ ազդիդ փրկութեան զինուոր գրեցար ու զէնքը ձեռքդ առիր՝ համիտական ձիււորը կամ թուրք սարին սեսածդ ժամանակ՝ զէնքդ մի գործածի՛ր, վայր նետիր ու փախիր . . . Քաղաքագիտօրէն պէտք է վարել :

Ահա արտասահմանեան «մտաւոր առաջնորդներէց» շատերի քարոզը :

Այդ քարոզներով վախկոտների, սարուկների և պատի հասկացողութիւնից զուրկ ոչխարների մի հօտ կը կազմուի և ոչ ազատութեան ձգտող մի ժողովուրդ :

Եւ հայրենիքի հայր խուլ է մնում. նա չի լսում այդ «գայլի աւետարանները» : Նրա մէջ ծնել է բողոքիւր, դիմագրելու ոգին : Նա առաջ է գնում. նա ապստամբական քայլեր է առնում : Ձոհերի թիւը շատանում է ի՞նչ անենք. ինքն է անողը, Հայ ժողովուրդն է դա, որ աւելի լաւ է համարում զոհելի՛ քան ապրիլ ստրուկ :

Ո՛չ, այդ չէ արտասահմանի փոշուր. ո՛չ, ուրիշ բան պէտք է անէ արտասահմանը : Նա չի կարող անտարբեր մնալ հայրենիքի ներկայ երկուների հանդէպ :

Արտասահմանը պէտք է հաւատարիմ արձագանգ դառնայ բուն երկրի դէպքերին : Նա միշտ պէտք է պատրաստ լինի թրքական լծի տակ գալարող իր եղբայրների ամէն մի հառաչըն ու վէրքը լսելի անել լուսաւոր մտորկութեան :

Նա պէտք է միշտ իր քուակը բաց պահէ ներսում տապալիւղ իր եղբայրների համար :

Նա պէտք է մտաւոր ու բարձրական զօրեղ նեցուկ ու խրախոյ լինի տաճկական գժողիլքի մէջ բնակող, գործով բողոքող իր անդամների համար :

Այդ ամէնը դեռ ոչինչ. դրանք դեռ փոքրիկ մարդասիրական քայլեր են :

Արտասահմանի գլխաւոր կո-

չումն է նիւթական ու բարոյական միջոցներ մատակարարել իսկական յեղափոխականներին, զէնքի ու անձնուրացութեան գործիչներին :

Արտասահմանի վրայ է մնում սովի, աղքատութեան ու բռնութեան ծովում լողացող եղբայրներին անձնապաշտպանութեան միակ միջոցը՝ փրկարար զէնքը մատակարարել :

Կան յեղափոխականներ, կան իսկական գործիչներ, իսկական անձնուրացներ : Պէտք է գտնել նրանց, պէտք է զէնք տալ նրանց, որ զօրացնեն ներքին կռուող ուժերի կազմակերպութիւնը, որ զինւած ուժի չափը շատացնեն ներսում . . .

Ձէնքն է ստրուկի միակ ապաւենը. զէնքն է բռնութեան զօհի միակ փրկութիւնը :

Եւ արտասահմանի հայութեան ամէնասրբազան ու ամէնամեծ պարտականութիւնն է զէնքի համար միջոցներ մատակարարել ոչ թէ կեղծ խոհեմութիւն, այլ զէնք ու անձնուրորութիւն քարոզող և գործող յեղափոխականին :

ՕՐԻԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Դպրոցի ֆենեքիւնները. — Վարժապետները. — Յիշի չի չի լախի սոճազանները :

Ազգային դպրոցներ. — ահա մի հիմնարկութիւն, որի չորս կողմը մի՛շտ ու ամէն տեղ անթիւ է նախընտրել են լինում, որի մասին ամէնից շատ բամբասանքներ են լինում : «Դպրոցում ոչինչ չեն սովորեցնում. դպրոցում մանուկները փշանում են» — կը լսէք մի քանիսի բերնից : Բայց ի՞նչ ապէս ի՞նչ առաւելութիւններ, ի՞նչ թերութիւններ ունին մեր աղգային դպրոցները՝ համարեա՛ւ ոչ սք մեղանից չգիտէ, բացի ուսուցիչներից մի քանիսը, որ իսկապէս արժանի են այդ պատասխանատու կոչման :

Մի անգամ արդէն ուսուցիչները վարձեցան՝ այլեւ լմնցաւ :

ամեն բան թողնում են նրանց վրայ ու հեռանում: Մի օր մի հաս ծնող, ժողովրդից մի հատ անձնաւորութիւն որք չի գնում գարսց տեսնելու, թէ ի՞նչ են անում, ի՞նչ և ի՞նչպէս են սովորեցնում վարժապետները մեր ասպագայի յոյսերը կազմող մանուկներին:

Ձեն հետաքրքրում, բայց բամբասում, չարախօսում են:

Վերջապէս մի օր պէ՞տք է մի քիչ աւելի խելացի լինինք, թէ մի՞շտ պէտք է նոյն ասիացի տգէտները մնանք: Ինչո՞ւ առանց փաստերի խօսել լաւը կամ վատը: Ինչո՞ւ ի զուր գովել կամ այս ու այն սեւ հոգի մոխիր խառնողների զրպարտութիւններին զոհ երթալով՝ բամբասել, չարախօսել:

Վաղը ազգային դպրոցների քննութիւններն սկսում են. ներս մտնենք, ներկայ լինինք մեր մանուկների քննութիւններին. մի որոշ դաղափար կազմենք մեր մանուկներին կրթող ուսուցիչների մասին: Տեսնենք, համոզուինք. արժանաւոր են՝ պահենք միւս տարին էլ. անարժան են՝ աւելի լաւերը որոնենք:

Այո՛, այո՛, պէտք է յաճախել քննութիւններին. պէտք է տեսնել ներկայ ուսուցչական գովելի կազմի տւած արդիւնքները: Այդ խի՞ստ պէտք է, որովհետեւ այժմէն արդէն սկսւել են խօսակցութիւններ այս ու այն սրճարանների անկիւններում ընդգէմ ներկայ ուսուցիչների: Խօսողները «սրճարանական» արարածներ են, որ այժմից հող են պատրաստում կամ իրենց կամ իրենց խնամիների համար: Ուսուցիչների մասին այդ մութ անկիւններում մոխիր խառնողները վանազան բամբասում:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

Թաւրիզ, 20 Մայիս
Ստեփաննոս եպիսկոպոսին ևն ուղղում. — Ռուսաց կոնսուլի յարաբերութիւնը առաջնորդարանի հետ. — Սարաւանակ եպիսկոպոսի մի ստոր մասնորոնը:

Թաւրիզում մի շատ տարօրինակ երեւոյթ է տեղի ունենում. կարծես զէպի յիտ են ուղղում գնալ, եւ մանաւանդ այնպիսի մարդիկ, որոնք իրանք իրանց զարգացած (°) են անուանում եւ յրազիրներում գրիչ շարժում: Եւ թէ խնդիրը մի երկու անգամ լրացրով հրապարակ հանուած չը լինէր, մենք ուշադրութիւն չէինք դարձնելու փողոցային խօսքերին. բայց երբ արդէն խնդրին լուրջ կերպարանք են տալիս, մենք պարտաւորւած ենք ցոյց տալու այդպիսի տղայամիտ յետադէմներին իրանց անարամարան պահանջը:

ասնքներ են տարածում. նրանք անյարմար են. նրանք խառնակիչ են, նրանք—օ՛ մարդկային յիմարութիւն — յեղափոխական են: Այս ամէնը տարածում են մոխիր խառնողները, որ իրենք՝ հորթեր արածեցնելու միայն ընդունակ մարդիկ՝ մտնեն դպրոց, վարժապետ լինին:

Գնա՛, Վառնայի երկուստարգութիւն, մոխիր, սրտացաւ հայք ազգային դպրոցները. տես, ծանօթացիր քո վասակներին կրթող ուսուցիչներին աւած արդիւնքի հետ, որ յիտոյ հանդիստ խղճով կապելու կամ արձակելու վճիռ տաս:


«Յիշելի-չյիշելին» մի զօրեղ աստակ եղաւ մի քանի մոխիր խառնող վաշխառուների ու անմիտների համար: «Ես»երն ու շահերը վիրաւորեցան: Ու «հայ-հրէշը» դրդեց մի քանիսին ստորագրութիւն հաստատել... որպէս զի դիմեն—լա՛ւ լսեցէք՝ Սօֆիա և քարտիկ տան գաղթական հայերի միջից մի քանի խառնակիչներին:

Մենք ծիծաղում ենք այդ ստորագրութիւն հաւաքող ոչսրմեկիների և նրանց այդ բանն անելու դրդողների վրայ:

Տեղացի և գաղթական ուղղամիտ հայերը լաւ են հասկացել «յիշելի-չյիշելին» և նրա տակը թաղուած բոլոր էնտրիզներն ու գաղտնի նպատակները:

Մենք համոզւած ենք, որ տեղացի լուրի հասկացող հայերը կը մնան իրենց բարձրութեան վրայ և այդ թողլով հազիւ թէ 13 ստորագրողներ ունենայ:

ԳԱՍՊԱՐ



ԿՐՕՆՔԻ ԽՏՐՈՒԹԵԱՆ ՈՒՅԻՆ ԱՆՍԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ ԱՆ

700 երկա՛ր ու ձիգ տարիներ թրքական բռնակալ ու յետադէմ լծի տակ հեծելով՝ Հայ ժողովուրդը շատ բան կորսնցուց: Անոր անագին մեծամասնութիւնը, մոռնալով ազգը, ազգայինը եւ հայրենիքը՝ դարձեր է կրօնական փարաի մը, տիրացուներու հասարակութիւն մը, որ ամէն ինչ կը նետէ կրօնքի կոնակը, ամէն ինչ անկէ կսպասէ... Իր ամէն գործը անոր համար կընէ, միանգամայն մոռնալով հայրենիք եւ ազգ հասկացողութիւնները: Ու այս տիրացուական ընթացքն այնչափ է առաջ գնացեր, այդ յետադէմ կղերական ոգին այնչափ է արմատաւորուած հայութեան մեծ մասին սրտերուն մէջ, որ նոյն իսկ մեր պատմական արիւնշալի էջերուն մէջ ամէնէն կատաղի ժամերուն կը հանդիպինք միշտ կրօնական պատակաւորութեան: Վէճերու եւ դաւանարանական կրօններու:

ԺԹ Դարն ալ ազատ չեղաւ ու զեռ ազատ չէ այդ խաւարամիտ վէճերէն: Կրօնական վէճերը շատ անգամ եզբարարուածն ու ազգասպան կրօններու տեղիք են տուած լուսաւորչական, կաթոլիկ ու լիթերական հայերուն մէջ. ու այն ալ այնչափ հոտած, նեխուած ձեւերով որ քիչ է մնացեր թէ տարբեր դաւանանքի պատկանող այդ երկու հայ համայնքները միատեսակ հաց չուտեն:

Խնդիրը այսչափ սուր կերպարանք է առեր Տաճկաստանի մէջ, իսկ արտասահմանի մէջ ատանկ չէ. աւելի քիչ է, բայց քիչն ալ նորէն աւօր է, խայտառակութիւն է:

Ինչո՞ւ բողոքական ու լուսաւորչական հայերն ի մի ձուլուելով, ասանց զաւանանքի խտրութեան չի վարեն ազգային ու կրթական գործերը. ինչո՞ւ միատեղ համախմբուելով չի խորհին ու գործեն մեր տառապող ազգի մասեր, բարոյական եւ քաղաքական վերածնութեան համար: Ամօթ ու խայտառակութիւն չէ՞, երբ լուսաւոր մարդկութիւնը օր աւուր աւելի կը լքանէ կրօնական խնդիրները, կենսական ամէն ասպարէզէ կը վանէ զանոնք՝ մենք ելլանք ու ասանկ լուսաւոր

դարու մը մէջ, արտասահմանեան ազատ երկիրներուն մէջ անգամ մեր ազգային գործերը կաշկանդինք կրօնական մեռած հարցերով... Այո՛, իրօք ամօթ է... սակայն դառն իրականութիւնն այդ է:

Ամերիկա, այս ազատ ու զարգացած երկրին մէջ ապրող հայերն ալ զուրկ չեն կրօնքի խտրութեան այդ վարակուէն: Մէկ կողմ թողլով «հոգաբարձական» երկպառակութիւնները եւ կրօնները, ներկայիս միայն առաջ կը բերիմ գրութեան շարժառիթ եղող «գիւղական ուսուցիչները ընկերութիւնները» կրօնական խտրութեան ոգին:

Ամերիկա եղող հայերու քիչ մը զարգացած երիտասարդութիւնը, հայրենասէր ու պարտաճանաչ ոգիով մը լեցուած՝ միշտ պատրաստ է եղած զոհողութիւններ ընելու եւ բարենպաստակ ազգային ձեռնարկութիւններ հաստատելու: Ազոնք հիմներ են նա եւ ընկերութիւններ ուսումը եւ զպրօքը զարգացնելու նպատակով: Գիչ քացատութիւններով բոլոր գիւղացի ու քաղաքացի գաղթականներն ունին այդպիսի ընկերութիւններ, որ կը գործեն՝ ի հարկէ ամէն մէկ խումբն իր ծննդավայրի օգտին: Այս ամէնը լաւ, սիրելի եւ գնահատելի է: Բայց ցաւալին այն է, որ ասոնց մէջ ալ բաժանում, անմիտարանութիւն կայ: Մի գիւղ ունի երկու կուսակցութիւն. մին «լուսաւորչական», միւս «բողոքական» երիտասարդաց. եւ երկուքն ալ կը գործեն նոյն եռանդով, նոյն նպատակի, նոյն սկզբունքներու համար... միայն տարբեր անուններով, ջլատած ու ժերով:

Ըսեք, խնդրեմ, ծիծաղելի եւ ատելի չէ՞ այս ընթացքը. ամօթ ու խայտառակութիւն չէ՞ ասիկայ: Բաղդասեցէք իրար հետ սկսուած գործի վեհութիւնը եւ դաւանանքի խտրութեան ա՛յդչափ ցածութիւնը: Մի՞թէ այս երկու կողմերը միանալով՝ փոխանակ լուսաւորչական կամ բողոքական անուններու՝ «հայ երիտասարդաց» անունով ընկերութիւն մը չեն կարող կազմել. չլինի՞ր ատանկ եւ իր բազմակողմանի օգուտները չո՞ւնենար: Անտարակոյս: Բայց չեն ընել:

Ժողովուրդը այս վարակալ գրու-

նոր-Դարում եւ Մշակում երեւցան թղթակցութիւններ, որոնք ցանկանում են ունենալ հանգուցեալ Ստեփաննոս Մխիթարեան եպիսկոպոսի նման մի առաջնորդ: Ատրպատականի այդ նախկին-հանգուցեալ առաջնորդը յայտնի է իր բարբարոս, յետադէմ, ինտրիզան, կաշտակեր, կասկածելի արարքներով: Ձեռք ուղղում անցեալի տխուր դէպքերը պրպակել եւ ապացուցանել մեր այս ասածը. ամէն թաւրիզի չէ ուրանում նրա դարուս ոգուն անհամաձայն եւ անպատարեր գործերը. սակաւին այսօրւայ նման յիշում են նրա արիւնոտ եւ մեղապարտ ձեռքերը:

Սակայն մի պահ համաձայնվելով մեր յետադէմ պարոններին հետ, երեւակայնք թէ Ստեփաննոս եպիսկոպոսը գերեզմանից դուրս գալով առաջնորդարանի աթոռի վրա նստած է: Արդե՞ք թոյլ պիտի տար, որ մի անարժան ուսուցիչ լսարանում վեր կենար եւ նրա երեսին ասէր—Մըբա՛զան, իրաւունք չունիս—եւ կամ մի ուրիշ ուսուցիչ յանդգնէր

ասելու թէ՞ Սրբազանը իրաւունք չունի միջամտելու այսինչ կամ այն ինչ գործին: Մենք որչափ որ ճանաչել էինք Ստեփաննոս եպիսկոպոսին, նա այդպիսի պարագաներում բարբարոսաբար այդ յանդգնող պարոններին կամ ոտքի տակ էր առնելու, կամ սէրբազներին թակել տալու եւ կամ յաւիտեականութեան դիրկը գլորելու... Ուրովհետեւ այսպէս էր արդէն վարւած զանազան հանգամանքներում, եւ այսպէս էլ վարվուելու էր:

Բայց այժմ Սահակ եպ. Այվատեանի օրով ի՞նչ ենք տեսնում. Ստեփաննոսի բոլորովին հակառակը: Սահակ եպիսկոպոս աղնաբար նեւառաջադէմ ու ազատ մի ուղղութեան է հետեւում: Եւ մեր զարգացածները(°) չեն սիրում այս ուղղութիւնը. անպատճառ պահանջում են ունենալ մի յետադէմ եւ բարբարոս առաջնորդ, որը նրանց պահէ միշտ ոտեր լըղղի վիճակում, որը բռնանայ ժողովրդի արդար ձայնի վրա, խեղդէ ամէն ազնիւ եւ ազատ

շարժում, որպէս զի... այդ խաւարամիտ պարոնները նրա թեւերի տակ հովանաւորելով, լպզտոր ջրում ձուկ երսան...:

Ժամանակին արդէն գրել եմ ուսաց ճնշող քաղաքականութեան տխուր եւ ցաւալի հետեւանքներին մասին և Պարսկաստանում մարանցարձազանց գտնելը. յիշել էի օրթօգօքսութիւնը հայերի մէջ եւս տարածելու մասին եղած ճիգերն ու ջանքերը, վերջապէս ուրախութեամբ յատնել էի Այվատեան Սրբազանի ազդու եւ վճռական գործունէութիւնը դաւանափոխութիւնը կասեցնելու եւ դաւանափոխներին Մայրենի եկեղեցու գիրկը վերադարձնելու համար:

Ի հարկէ Սրբազանի իր հօտի վրայ ունեցած այս աչալուրջ հսկողութիւնը հաճելի չէր լինելու ուսաց կոնսուլին եւ ուսուցիչներին. մանաւանդ որ Սրբազանը վերջերս՝ համաձայն Ղաթայ թաղի հոգաբարձութեան խորհուրդներին՝ Ուրմիա-

թեւեռն ազատելու, զանի կրօնական ներսած գաղափարներէն բարձրացնելու գործը հայ մամուլի բաժինն է:

Պիտի մարակէ հնամուլ, տիրացու գաղափարներն ու վէճերը: Պիտի ոգևորէ երիտասարդութիւնը, պիտի համոզէ զանի որ թողնէ հին ու ժանգոտած կրօնական զէնքերը եւ զինուոր հայրենասիրութեան ու համերաշխութեան անյաղթելի զէնքերով, որ միակ միջոցն է ներկայ հայ սերունդի վրայ գրուած ծանր խաչը կրելու:

Այդպէս պէտք է ընէ ամէն ճշմարիտ ու ազնիւ հայ, եթէ կուզէ ազգին օգտակար ըլլալ:

Փրօփիսէնս, 4 Յունիս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօֆիա, 14 Յունիս

Սօֆիանի էի վերջին նիստին մէջ ֆինանսական նախարար Թէնէէվ կարգաց իր զեկուցագիրը (թօկլատը) նոր փոխառութեան առթիւ. նախարարը իրական ու պնդագոյնեցրով նկարագրեց Պուլկարիոյ տնտեսական կացութեան տագնապը, և հանրութեան առջեւ մերկացուց այդ ճշմարտութիւնը թէ Պուլկարիա անպատիւ սնանկութեան դուռը հասած է. նա հսկիրճ, համոզիչ փաստերով զձագրեց ֆինանսական վիճակը Սթամպուլօֆի ժամանակ, և յարեց թէ Սթամպուլօֆ երբ քաջուեցաւ, պետութիւնը 32 միլիօն ֆրանք ունէր Լէնտէրպանքը և 17 միլիօն ալ չը գանձած տուրքեր. իսկ երբ Սթոյիլօֆ եկաւ տնտեսական խնայողութիւններ ընելու խոստումներով, երկիրը աւելի կողոպտուեցաւ: Նա պարզեց Սթոյիլօֆի խոշոր սխալները, որոնց շնորհիւ երկիրը հասաւ

վհի մէջ գլորուելու աստիճանին, և ըսաւ թէ Սթոյիլօֆ ահագին պարտքեր թողուց և միայն 1,500,000 ֆրանք պետական գանձին մէջ: Ահա այս է բուն էական պատճառը որ պաշտօնեաներուն ամսական մը չվճարուեցաւ, որովհետեւ Պուլկարիոյ ամբողջ ծախքը ամիսը 4,000,000 ֆրանք է:

Հիմակ, Պուլկարիաի գանձին մէջ 800,000 ֆրանք կայ:

Երեսփոխաններուն ու ներկայ եղողներուն վրայ այս ճշմարտութիւնը իր տպաւորութիւնը թողուց: Սակայն դարձեալ լուր կը պատի թէ կառավարական երեսփոխաններն ալ դէմ պիտի կենան եղեր այս նոր պայմանագրութեան: Կերենայագահ հըռչակաւոր Քրաէվ հրաժարեցաւ իսկ ամենավերջի նիստին մէջ որոշուեց է ամբողջ նաւահանգիստները ու մաքսատուները միջազգային գօնթրօլի երթարկել և միայն 25 միլիօն ֆրանք ընդունիլ. այդ 260 միլիօն փոխառութեան մնացածը պարտքի սպառնալով: Եթէ այդ ֆինանսական խնդիրը չկարգադրուի լուր կայ կապիտէթի հրաժարման:

Այս կիրակի Սօֆիայի եկեղեցիներու մէջ հանգիստաւոր պաշտօններ կատարուեցան Բրիլիբի մէջ վերջերս նահատակուած երեք մականդոնացի գործիչներուն կավազովի, ձուրովի, Չէմքովի մահուանը առթիւ, որոնք դիւցազնական մահը դերագաս համարելով Սուլթանի բանտէն ու աանջանքէն, անձնասպան եղան: Երկրի իշխանը Սուլթանի նօթախնայպէս պատասխանեց է—«Պուլկարիա երբէք չպիտի խառնուի այդ գործերուն, որ իր երկրին մէջ չեն»:

Կառավարութեան այս պատասխանը շատ զժգոհութիւններու

պատճառ տուած է. ազատականներէն այս պահպանողական քայլը անսպասելի էր. սահմանագլխի հսկողութիւնները խոտացած են: Անկարգութիւններ ու ընդհանրումներ պատահելը Մակեդոնիաէ եկող ուղեւորներէն կատուգուի. նոյնպէս ալ պանիպոնիներու խուժելը Սերպիաի սահմանը. կը հաստատուի և թիւրք զինուորներու պատրաստութիւնը ու շարժումները:

Սօֆիաի հայ գաղութը բաւական խրատումներ ունեցաւ Օրմանեանի «չիշուի չիշուի» խնդրոյ առթիւ: Եւրաթ մը առաջ միքանի անձեր դիմելով քահանային խնդրեց են որ չյիշէ: Քահանան չը յարգելով ժողովուրդի ձայնը պատրուակ կը բռնէ թէ մեծամասնութեանը կարօտ է այդ խնդիրը, և երկրորդ անգամ դիմում կը ըլլայ, ան առեւ թաղականի հետ կոկիսին ոտնձգութիւններ հանել ինչ ինչ օրինական ձեւակերպութիւններ պրպտելով, և վերջապէս քահանային տնօրինութեամբ կորոշուի եկող կիրակի ընդհանուր ժողով գումարել և հոն վերջնական լուծում տալ գործին:

Իսկ մէկ կողմէն հաստագլուխ փրկիսօփայի անուն վայելող մէկը միքանի խեղճ գաւառացիներուն կը սպառնայ եկեղեցական արարողութիւնը խանգարողաբար սորել, երկրի տիրող օրէնքը զօրավիզ ցուցնելով: Թող այդ խեղճուկը գիտցած ըլլայ որ հայ եկեղեցոյ արարողութեան մէջ պատրիարքի անունը յիշուելը զուտ «ազգային» քաղաքական հանգամանք ունեցող խնդիր մըն է և բնաւ էական առընչութիւն մը չունի եկեղեցոյ ծեսի և խորհուրդոյ հետ: Հայ եկեղեցին ազատ ըլլալով և ժողովուրդի մէջ լինելով ընտրած ըլլալով Պատրիարք

քը, ժողովուրդը բաձարձակ իրաւունք ունի իր զժգոհութիւնը յայտնելու: Քահանան և ազատները բացայայտ փաստեր կուզեն և անխիղճ զրպարաութիւն կը համարեն «Եարժում» կողմէ. Օրմանեանի դէմ գրածը. անոր գործունէութիւնը գովելի կը գտնան: Աս մարդիկ կամ ազգային ցաւերով չեն հետաքրքրուիր կամ ալ բողոքովին անտարբեր են:

Եթէ այդ ազաները չը գիտեն, որ միայն Օրմանեան մը կրնար Սուլթանի գօնխային փափաքները իրականացնել: Եւ ասոր օրով կրօնապետութեանը, ճիշդութեանը, ֆրանչիսկեանները և միսիօնարները կրնան ազատ կերպով իրենց մէջ բաժնել յոշոտուած հայ ժողովուրդը:

Կիլիկիայ զուրկ կը մնայ սրթութեն հովիւ է մը:

Հայոց պաշտելի Պատրիարքը կը հալածուի և կը զոհուի Օրմանեանի գաղտնի դաւերուն. անոր Եզրիպտոսի առաջնորդ ըլլալուն կը դիմադրէ, դիտմամբ, ապաշխարել տալու համար Ս. Յակոբեանց բանտարկեալին, որ յանդգնեցաւ իրաւիքէն հաշիւ պահանջել:

Օրմանեան չէ, որ իր նախորդներէն աւանդուած սրբութիւնները կը թաղէ մէկիկ մէկիկ. սահմանագրութիւնը գոյութիւն չունի, միայն ալ ընկերութիւնը՝ մեր շիջերէն մին՝ գաղթած է. կրօնափոխութիւններ կը ըլլան, ժողովուրդը կը ջնջուի և Օրմանեան «խորագետ» էֆէնտին լոկ հանգիստաւոր դեր կը կատարէ. իրեն ի՞նչ հոգ. մեծ մարդարէի յաջորդը այդպէս բարեհաստ է, ինքն ալ կը գործադրէ. ուրիշ նա իր ժողովուրդին նուիրուած չէ, այլ լոկ Երեւոյի մէկ պարզ «գործակատարն» է և ոչ հայոց

յից եկած մի նամակի գլխաւոր մասը ֆրանսիներէն թարգմանել տալով, զրկել էր կօնսուլին, որի մէջ նկարագրուած էր ոռուս եւ ոռուսագաւան անորի կղերներէ հայ ժողովուրդի նկատմամբ ունեցած անպատշաճ վարմանը. հայերին որսալու համար քաղաքական ազատութիւն չնորհելու (°) խոստումները եւ այլն: Սրբազանը բողոքելով այս բաների զէմ, պահանջում էր հայերին չը նեղել և չը բռնադատել, երբ նրանք ցանկանան իրանց Մայրենի եկեղեցու գրկը վերադառնալ: Որովհետեւ, Ուրմիայում, մի քանի հայեր, ոռուս առաքելներէ պոտոսախոս խոստումներին խաբուելով, ընդունել էին ոռուսագաւանութիւնը եւ յետոյ, տեսնելով որ ոռուսագաւան լինելը իրանց ոչ մի ցաւին զարման չէ լինում, ուղում են վերադառնալ իրանց նախկին գաւառութեան լուսաւորչականութեան: Ահա այդ սեղից ծագում է ահագին զաւթազառուս առաքելները իրար են անցնում, սպառնում հայերին սրբիւր քարոզել, եթէ նրանք օրթոքսոս-

թիւնից հեռանան, եւ այլն, եւ այլն: Ի հարկէ Սրբազանի պահանջը կօնսուլի գործին չէր գալիս. Սրբազանի գործունէութիւնը նկատուած է իբր մի մեծ խոչնդոտ եւ արգելք ոռուսագաւանութեան տարածման: հետեւաբար նա զանազան ոչխարամիտ հայերի շրջանում ամէն ջանք գործ է գնում որպէսզի Սրբազանի վարկը կտորէ եւ եթէ կարելի լինի այդ անհեռատեւ եւ Սրբազանի անձին թշնամի (ոչ թէ գործերին) հայերի միջոցով Սրբազանին հեռացնի թաւրիցից:

Չը գիտենք թէ այդ ոչխարամիտ հայերը ի՞նչ են ցանկանում. արդեօք փափաքում են, որ Ատրպատականի հայերը առանց արգելքի ընդունեն օրթոքսոսութիւնը եւ ոռուսանան: Եթէ այդ է իրանց միտքը, մենք ոչինչ ասելիք չունենք ոռուսից վարձուած այդ սեղաններին: Սակայն միւս կողմից թող նրանք լաւ գիտենան թէ կան ուրիշ հայեր եւս, որոնք իրանց խորհածից տարբեր են խորհում, և իհարկին կարող են ցոյց տալ իրանց

անձնու իրութիւնը դէպի հայութեան պաշտպանութեան սուրբ գործը...: Իսկ եթէ այդ չէ իրանց միտքը, եթէ միայն ուղում են այդ ստոր միջոցներով իրանց անձնական ու եսական հաշիւներին զօհել. հայերի հարկն գործը, հակառակ դէպքում, ճշմարիտ հայի սիրտ կրողները կարող են շարժել իրանց բազուկները. և հետեւանք լաւ չի լինի նրանց համար:

Եւրոպայի մէջ Ամերիկայից գրած մի թղթակցութեան մէջ կարդացի Սարաճեանի կալիֆոռնիայի այն յայտարարութիւնը թէ՛ գաշնակցականներին չէ սիրում, ատում է, եւ այլն. Մարսիլիայի խանութպան թերթին և կուսակցութեան համակրող այդ Սարաճեանից արդէն ուրիշ բան չէինք սպասում. որովհետեւ երբ անգլուս փոխ-առաջնորդ էր, արդէն ցոյց տուեց իր գոյնը և ոգին: Եւստ ճշմարիտ է իր այդ յայտարարութիւնը եւ գործով էլ ապացուցեց իր այդ համոզումը: Ուստաւորի

արչաւանքից յետոյ. Սալմաստէմ ձերբակալուող մի գաշնակցական պարոնի իսկական անունը և ազգանունը ոռուսաց կօնսուլին մատնեց մի երկրորդ անձի միջոցով և պատճառ հղաւ այդ պարոնի արքայան:

Կօնսուլը շատ լաւ էր ճանաչում այդ գաշնակցական պարոնին և համակրում էր, նրա անձնական բարեկալը լինելով. սակայն պարոնին ճանաչում էր ոչ նրա իսկական անունով, այլ ծածկանունով: Եթէ իսկական անունը Սարաճեանից չը մատնուէր, ոչ մի փաստ չկար նրան յեղափոխական գործիչ նկատելու և Ռուսաստան ուղարկելու: Միմիայն նրա իսկական անունը մատնելը պատճառ գործաւ Աստրախան արքայից, և այդ մասնութիւնն էլ ի գործ դրեց մեր գերագատու Սրբազանը (°) գաշնակցականներին ատելուն համար...:

ԳՆԻԱԿ

պատրիարք . ուրեմն վատ մը եւ գաւազան մը . պէտք է պատ- ժուի :

S.

Ռուսչուքի մէջ՝ իբր մխիթա-

Ռուսչուքի մէջ՝ իբր մխիթա- րական երեւոյթ՝ կայ Տիկնանց Խնամակալութիւն մը , որ կը ջա- նայ օգտակար ծառայութիւններ մատուցանել մանկապարտէզին ու երկսեռ վարժարաններուն : Ման- կապարտէզին՝ անոր ծախքերը գոցելու ճիգեր ընելով . դպրոց- ներուն՝ իրենց անաչառ դիտու- ղութիւններն ու խորհուրդները տալով որոնց որ անկէ : Առաջի- նին մէջ մասամբ կը յաջողին , վասն զի իրենք երբեմն ուղղակի ալ կը գործեն , ինչպէս այս ան- գամ ներկայացում մը տուին : Իսկ երկրորդին մէջ բնաւ չեն յաջողիր , վասն զի մեր հոգա- բարձուները գործիք եղած կըր- քերու ձեռք , չեն ուզեր և ոչ մէկ արդար ու բանաւոր ձայն լսել . ձայն՝ որ երկու տարիէ ի վեր իրենց ականջներն շեփո- րով կը հնչուի . ու այսպէս մե- զի երկու ապարդիւն տարիներ բոլորել տալէ վերջ՝ 6000 ֆր. քի- ահագին պարտք մալ նուէր ու ժառանգութիւն (.) կը ձգեն . բեռ մը , որ տեղիս հայ հասու- րակութիւնը տանելու կարող չէ :

Տիկնանց խնամակալութիւնը անցեալ կիրակի տուաւ իր ներ- կայացումը , «Մարի Ժան» բա- րոյալից տրամը , որը բաւա- կան աղէկ ներկայացուց «Վեսե- լո» հայկական խումբը , դժբաղ- դաբար թուրքերէն լեզուաւ : Հասոյթը եղաւ 281 ֆրանք : Այս հասոյթը թէ և աւելի շատ կըր- նար ըլլալ , բայց հոգաբարձու- ները թէ չաշխատեցան և թէ նոյն իսկ իրենց սեփական պարտքերը չը կատարեցին : Տիկնանցը հոգաբարձուներուն ներկայանալով կուզեն անոնց ալ տոմսակ վաճառել , բայց ա- նոնք իբրև «տան մարդ» ազ- գային և ոչ մէկ հանդէսի՝ թատրոն , պարահանդէս եւ այլն ստակ տալու վարժուած չը լինե- լով՝ տարօրինակ և դժուարին եկաւ տիկնանցը այս պահանջը և , ի՞նչ կըսէք , հոգաբարձուները սոսկ մուտք չվճարելու պատճա- րով , իրենց բացայայտութեամբը փայլեցան այս ներկայացումին մէջ , որ ինչպատ մանկապար- տէզի կը տրուէր :

Բ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Բարիզէն կը գրեն մեզ . «Պ. Չերազ Կ. Պօլիսէն տեղեկութիւն առած ըլլալով որ Օրմանեան իր պաշտօնին աննպաստ հեռագիր ուղղեր է Խաչ . Վեհափոյովի նա- խագահին և Թուրխան փաշա խոստում առեր է Պ. տը Սգաալէն » ր Հայոց խնդրագիրները չը յիշատակուին ատենագրութեանց մէջ , Յունիս 14ին Բարիզէն նա- խագահին ուղղեց հեռքմագիր մը , որոյ պատճէնը հրատարա- կուեցաւ Լահէի «Տակալատ»-ին մէջ (16 յունիս) : Պ. Չերազ այն առիթով Պ. տը Սգաալին հաղոր- ւեց Վառնայի , Ռուսճուքի , Տօպրիչի , Ֆիլիպէի , Պալլըքի և Թաթար-Պաղարճըքի միթիւնիե- րու պաշտօնագիրներն ալ , ու- րոնք ուշ հասած էին իրեն , նաեւ տեղեկութիւններ Գահիրէի միթիւնիկէն և Պուքրէչի ազգայ- նոց մեծամասնութեան համաձը- տութեան նկատմամբ :

— Մայիս 9ին Լահէյի մէջ տեղի ունեցաւ Երիտասարդ- թուրքերու , Հայերու , Մակեդո- նացիներու և Լեհացիներու մի- ացեալ գօնֆէրանսը : Ներկայ էին բաւականաչափ երեսփոխան- ներ , ինչպէս ասքթ . Գոյբերը , Թրօշլուքա (ընկերավարական) , Բիզերսէն և Սմէնկէ (ազատա- կաններ) եւ այլն :

Ոստիկանութիւնը մինչև վեր- ջին վայրկեանը ամէն հնարաւոր միջոց գործադրեց խանդարելու՝ բայց չյաջողեցաւ : Նախագահ Վան-Քօլ (ընկերավարական) յայ- տարարեց , որ «ինքն աւելի զարմայած է քան սրբողած Կու- տիկանութեան այս վարմունքին առթիւ : Սպիտակ տնակին միջ խաղաղութեան ժողովի կատա- կերգութիւնը կը խաղան , իսկ հոս հալածուածներու բերանը կը բռնեն , որ՛չի բողոքեն» :

Գօնֆէրանսի մէջ խօսեցան՝ Ահմէտ Բիդան , Անմեղիկեանը և Մակեդոնացի յոյնի մը փոխա- րէն՝ Վան-Քօլը : Ասոնք ամէնն ալ նկարագրեցին թուրքիոյ ներկայ ողբալի վիճակը , ժողո- վուրդներու կրած բոլոր տան- ջանքները , բռնակալի զզուելի արարքները եւ այլն :

— Իմբագրութիւնս ստացաւ Թորոս քհ . տէր Խակեանի հրա- տարակած «Թուղթ հովուական առ մերաղնեայս բնակեալս ի Մաճչէսթըր և ի շըջակայս» խո- րագրով տետրակը : Թորոս քա- հանան Մանչէսթըրի հայերու հոգեւոր հովիւն է : Պատեհ առ- թիւ մը կը խօսինք նորէն այդ գէրբոյկի մասին :

— Կը լսենք , որ Գէորգ քհն . Հիւրմիւլեանի 3ամեայ դատա- պարտութեան առթիւ 250 ստո- րագրութիւններով հանրագրու- թիւն մը կազմուած է , որ կե- րաշխատրէ անոր անմեղութիւնը

և կը պահանջէ մանրամասն քննութիւն մը :

— Տեղացի և գաղթական բո- լոր ուղղամիտ հայերը բաղմաթիւ ստորագրութիւն հաւաքած են , որ «Օրմանեան չիք պատրիարք»-ի անունը չյիշուի տեղոյս եկեղե- ցիին մէջ :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ

Արտաքին փառքի համար հոգի տուող ֆրանսիսն վերջին ժամա- նակներում , ամեն բան մտա- ցած՝ զբաղված էր Դրէյֆուսի խնդրով : Ֆրանսիաի ներքին կեանքին անձանթ ժարդը բար- կանում էր որ լուսաւոր ֆրան- սիան շատ կարեւոր խնդիրներ բարձրթող արած , տակն ու վրա էր լինում ինչ որ մի սպաի հա- մար :

Բայց խնդիրը լոկ Դրէյֆուսի վրա չէր . գոնէ մաքուր և աղա- տամիտ հայրենասէր ֆրանսիա- ցիների համար : Արդարութիւնը ոտնակոխ էր եղած . այն էլ ազ- դեցիկ զինուորականների կողմից , որոնք իրանց հայրենիքը ծա- խած լինելով՝ յանցանքը զցել էին թշուառ հրէայ սպաի վրա և ճիգ էին թափում թէ պատժից աղաւ մնալ , թէ իրանց ազդե- ցիկ դիրքը պահպանել և թէ շա- րունակել իրանց դաւաճանու- թիւնը :

Եւ ահա այս վատերին պաշտ- պան էին հանդիտանում վատ մա- մուլը , կղերական և արքայական կուսակցութիւնները , որոնք չեն ուղղում որ ֆրանսիական ժողո- վուրդը ազատի իրան կաշին քերթողներէր և ինքն իրան կա- ռավարի :

Դրէյֆուսը լոկ կուրի պատճառն էր . կուրը մղում էին աղաւ և մաքուր ֆրանսիացիները վատ յետադէմների դէմ : Պայքարը տաք էր . երկու կողմից էլ կըռ- ւում էին կատաղաբար . միայն այն տարբերութեամբ , որ մա- քուր , ազատամիտ հայրենասէր- ները կուռում էին մաքուր և ազ- նիւ միջոցներով , իսկ խաւարա- միտները ստով , խաբբայու- թեամբ , կեղծիքներով և խար- դախութեամբ . ճիշդ այնպէս , ինչպէս ամէն ժողովրդի մէջ , երբ լոյսը կուռում է խաւարի դէմ , ազատութիւնը բռնութեան , ազ- նութիւնը կեղծիքի :

Մենք աւելորդ ենք համարում ֆրանսիական այս ներքին մեծ պայքարի մանրամասնութիւննե- րի մէջ մտնել , ուր ֆրանսիան ե- րեւան եկաւ իր ամենաազտու և ամենամաքուր տիպերով :

Բայց ուրախութեամբ արձա- նագրում ենք որ ազնութիւնը և լոյսը յաղթող են հանդիսանում ֆրանսիայի մէջ , որին իբր փոստ կարող են ծառայել հետեւեալ ի- րողութիւնները :

Վճարեկ ատեանը առանց դէս ու դէն ընկնելու բեկանեց Դրէյ- ֆուսի դատավճիռը : Ստանալի կղզու դժբախտ կալանաւորը վե- րադառնում է նորից գաղթելու . և , դուցէ բոլորովին արդարա- նայ :

Ձօլան՝ մտքի , սրտի , գրչի և արգարութեան այդ անվեհեր զինուորը վերագարձաւ երբեմն ի- րեն քարկոծող մեծ մայրաքա- ղաքը իր կամաւոր ասքարից և այսօր վայելում է ժողովրդի գուրգուրանքով լի համակրան- քը : Քալ և անվեհեր Պիկարը դուրս եկաւ բանտից , Մի խօս- քով , լոյսի և արգարութեան պաշտպանները կրկին բռնեցին իրանց պատաւոր տեղերը , իսկ օրէնքին և բանտին են յանձ- նվում խաւարի և լրբութեան հե- րոսները :

Լոյսը յաղթում է . խաւարի զաւակները չէին կարող դիմա- նալ և նրանք սրիկայաբար վի- րաւորեցին համեստ , բայց հա- սարակապետութեան ներկած անվեհեր նախագահին՝ Լուբէին : Վիրաւորուները պատմեցին Դիւ պիւի մինիստրութիւնը ընկաւ . երկարատեւ նախարարական ազգ- նապը տիրեց . վերջի վերջոյ անցեալ օր կազմվեց Վալդէկ Բուսսօի նախարարութիւնը , որի անդամները , զրբթէ բոլորն էլ , ամենաազատամիտ սարբերից են : Գուցէ այս մինիստրութիւնն էլ երկար չը տեւէ . գուցէ նորից անգոյն մարդկանց ձեռքը անցնի հասարակապետութեան զեկը , բայց և այնպէս , այսպիսի մի մինիստրութեան կազմվելը ա- պացոյց է , որ հեռու չէ այն օրը՝ երբ ֆրանսիան պէտք է իր ա- մենայառաջադէմ տարբի—ժողո- ջրդի հարազատ զաւակների ձեռ- քով կառավարվի :

Մաղթենք որ այդ օրը շուտ հասնի . որովհետեւ ազատ և մա- քուր հասարակապետական ֆրան- սիան իր բարեբար ազդեցու- թիւնը կուենայ ամբողջ մարդ- կութեան յառաջադիմութեան վրա :

ՎԱՐՆՈ

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՇԱՐԱՆ «Կ. ՊՈԼԻՍ»

Ի Ռուսչուք

Պատիւ ունիմ ծանուցանելու ար- գոյ յաճախորդներուս թէ՛ ճաշարանս փոխադրած եմ «Օթէլ Պօլիս»-ի կարգը «Օթէլ Բրու-Ասէն»-ի ներքեւ , ուր բոս առաջնոյն խնամով կը պատ- րաստուին տրեւելեան և եւրոպա- կան համաամ կերակուրներ :

Մաքրութիւն , արգո սպասարկու- թիւն , չափաւոր գին :

3—3 Վահան Մամիկոնեան

Отговорникъ : А. СУКЯСОВЪ

Печатняпа „Взаимность“ Варна